

Գանատայի Պահպանողական կուսակցության առաջնորդի տեղակալ Մելիսա Լանթսմանի հետ հանդիպման ընթացքին Հայ Դատի լանդմաստիվը արծարծեց Արցախի հարցը

Մարտ 16-ին, Գանատայի խորհրդարանի անդամ եւ Գանատայի Պահպանողական կուսակցության առաջնորդի տեղակալ Մելիսա Լանթսման այցելեց Մոնթրէալի Հայ Կեդրոն, ուր հիւրընկալուեցաւ Գանատայի Հայ Դատի յանձնախումբի պատուիրակութեան կողմէ: Տիկին Լանթսմանի կ'ընկերակցէր ծերակուտական Լէօ Հուսարոս: Գանատայի ընդդիմադիր կուսակցութեան փոխառաջնորդին հետ հանդիպման ներկայ էին նաեւ Մոնթրէալի Հայ Կեդրոնէն կերպուցիւններու եւ հաստատութիւններու ներկայացուցիչները: Հանդիպման ընթացքին, Գանատայի Հայ Դատի յանձնախումբի նախագահ Խորէն Տիմիթեան անդրադարձաւ Արցախի հիմնահարցին, Ատրպէյճանի մէջ կալանքի տակ գտնուող Հայ ռազմագերիներուն, Արցախի պատմական յուշարձաններու դէմ իրագործուող ատրպէյճանական վախճանութիւններուն եւ Արցախահայ կուսակցութեան ազգային ինքնորոշման իրաւունքին, շեշտելով, որ Արցախի եւ ար-

ցախահայութեան այսօրուան իրավիճակը Գանատայի Հայ համայնքը յուզող գլխաւոր հարցերն են:

Օնթարիոյի Թորնհիլ ընտրատարածքի պատգամաւոր Մելիսա Լանթսման ներկայացուց Գանատայի ներքաղաքական կացութիւնն ու ընդդիմադիր Պահպանողական կուսակցութեան քաղաքական հայեցակարգը, նշելով, որ իշխանութեան հասնելու պարագային, Պահպանողական կուսակցութիւնը ինչպէս անցեալին, դարձեալ պիտի համագործակցի Գանատայի Հայ համայնքին եւ յատկապէս Հայ Դատի յանձնախումբին հետ:

Գանատայի Հայ Դատի յանձնախումբի Օթթաուայի գրասենեակի տնօրէն Սեւակ Պելեան իր կարգին շեշտեց, որ Հայոց Յեղասպանութեան 109-րդ տարելիցի նախօրեակին, հայութիւնը վերստին ցեղասպանութեան ու սովասպանութեան ենթարկուեցաւ, որը գանատահայութեան առթեց խոր հոգեխոց: Ան շեշտեց, որ 21-րդ դարուն, մարդու իրաւունքները ոտնակոխող նման ցեղաս-



պանական արարքներու դէմ յանդիման Գանատայի պետութիւնը պէտք է լուսմնայ, այլ գործնականօրէն հաշուետուութիւն պահանջէ եղեռնագործէն:

Գանատայի Մերակոյտի անդամ Լէօ Հուսարոս իր կարգին վստահեցուց, որ յառաջիկայ խորհրդարանական ընտրութիւններուն Պահպանողական կուսակցութեան յաղթանակ արձանագրելու եւ իշխանութեան դեկը ստանձնելու պարագային՝ Հայաստանի հանդէպ Գանատայի աջակցութիւնն ու զօրակցութիւնը աւելի քան երբեք պիտի ամրապնդուի:

Հանդիպման աւարտին տիկին Լանթսման շրջագայեցաւ եւ ծանօթացաւ Հայ Կեդրոնի յարկին տակ գործող կազմակերպութիւններու աշխատանքներուն, այցելելով «Հորիզոն» խմբագրատուն եւ ծանօթանալով Համազգայնի պարախումբին ու ՀՅԴ Գանատայի Պատանեկան միութեան աշխատանքներուն: Ան նաեւ շնորհակալագրեր յանձնեց Հայ Դատի յանձնախումբին եւ Հայ Կեդրոնի յարկին տակ գործող կազմակերպութիւններու՝ գանատահայ համայնքին մատուցած ծառայութիւններուն համար:



16 Մարտին, Վանդուվերի մէջ կայացած SUCCESS բարեսիրական հիմնարկի տարեկան ընդունելութեան ներկայ գտնուեցան Գանատայի Հայ Դատի յանձնախումբի Արեւմտեան շրջանի ներկայացուցիչներ Վահէ Անտոնեան, Վանեսա Պարտազեան Յակոբեան, Մեղրիկ Սիւլահեան եւ Սեւան Յակոբեան, որոնք այդ ընթացքին առիթը ունեցան առանձնազրոյց մը ունենալու միջոցառման ներկայ Օթթաուայի մէջ Միացեալ Նահանգներու դեսպան Տէյվիս Լ. Գոհէնի հետ: Հայ Դատի յանձնախումբի ներկայացուցիչները արծարծեցին 150 հազար արցախահայերու բռնի տեղահանումը իրենց պապենական հայրենիքէն եւ պահանջեցին, որ ԱՄՆ դիւանագիտական աւելի վճռական միջոցներ իրականացնէ Ատրպէյճանի եւ Թուրքիոյ յարձակողապաշտ մարտավարութեան դէմ:

Մոնթրէալի մէջ հանդիսատար տօնակատարութեամբ նշուեցաւ Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային միութեան 95-ամեակը



Նախաձեռնութեամբ Համազգայինի Գանատայի Շրջանային վարչութեան, նախագահութեամբ տիկին Շաբէ Կեօնեանի, կազմակերպութեամբ Համազգայինի Շրջանային եւ Քեպէգի «Սանահին» մասնաճիւղի վարչութեանց, Շարաք, 9 Մարտին, Մոնթրէալի մէջ նշուեցաւ Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային միութեան հիմնադրութեան 95-ամեակը, ներկայութեամբ Համազգայինի Կեդրոնական վարչութեան ատենապետ Զաֆար Քէշիշեանի: Կարդալ էջ 3:

HONDA GABRIEL

THE ALL-NEW 2023 HONDA CR-V TOURING HYBRID

KEVORK ASADOURIAN
TRO BACHEKJIAN

7000, boul. Henri-Bourassa Est
Montréal-Nord, (Québec) H1G 6C4
☎ : 514 327-7777



Al-Nejmah

MIDDLE EASTERN SUPERMARKET

NOW OPEN
NOW OPEN



Սեփականատեր
Յարութ Միփան

Ընտանեկան բացառիկ գործառնություն
ուր կը գտնեք ձեր բոլոր կարիքները
ուտելիքներու վերաբերեալ

IN HOUSE

COFFEE ROASTING & GRINDING
ROASTING FRESH NUTS
SESAME GRINDING TO MAKE FRESH TAHINA
TANOOR BREAD & IRAQI SAMOON

Մուրճ աղալ եւ խարկել
Հնտեղէն աղալ օրական դրութեամբ
Շուշմայ աղալ եւ թահինի պատրաստել
Թոնիքի հաց եւ իրաքեան սոմուն

Supermarket | Restaurant | Bakery | Halal Butcher
Վաճառատուն, ճաշարան, փուռ, մսավաճառ

PHONE: 289.232.1200
3085 Hurontario St, Unit 1-6, Mississauga



Մոնթրեալի մէջ հանդիսատար տօնակատարութեամբ նշուեցաւ Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային միութեան 95-ամեակը

Նախաձեռնութեամբ Համազգայինի Գանատայի Շրջանային վարչութեան, նախագահութեամբ տիկին Շաքէ Կէօնճեանի, կազմակերպութեամբ Համազգայինի Շրջանային եւ Քեպէզի «Սանահին» մասնաճիւղի վարչութեանց, Շաբաթ, 9 Մարտ 2024-ի երեկոյեան ժամը 8:00-ին, Ս. Յակոբ Ազգ. վարժարանի «Բաստրամանեան» սրահէն ներս, տեղի ունեցաւ «Ջահակիրներ» յորհրդանունով հանդիսութիւնը, նուիրուած Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային միութեան հիմնադրութեան 95-ամեակին, ներկայութեամբ այս առթիւ յատուկ Լիբանանէն ժամանած Համազգայինի Կեդրոնական վարչութեան ատենապետ Զաքար Քէշիշեանի, եւ անդամներ Թամար Տօնապետեան Գուգուեանի եւ Լորիկ Սապուհեան Մատուրեանի, ՀՅԴ Բիւրոյի անդամ Բաֆֆի Տօնապետեանի, ՀՅԴ Գանատայի Կեդրոնական կոմիտէի ատենապետ Խորէն Տիմիթեանի, Քեպէզ նահանգի երեսփոխան Սոնա Լախոյեանի քաղաքական կցորդ Հիլտա Թուրչուճուճի, Մոնթրէալի քաղաքապետական խորհուրդի անդամներ Վանա Նազարեանի եւ Մէրի Տերոսի, Լաւալի Քաղաքապետական խորհուրդի անդամ Սեդա Թօփուզեանի, ՀՕՄ-ի Կեդրոնական վարչութեան Գանատայի մօտ ներկայացուցիչ Արմինէ Կարապետեանի, ՀԲԸՄ-ի Թէքէեան մշակութային միութեան, ինչպէս նաեւ Մոնթրէալի եւ Լաւալի ուղեկից միութիւններու Շրջանային եւ տեղական վարչութիւններու ներկայացուցիչներուն եւ երեք հարիւրէն աւելի հաշուող հոծ բազմութեան:

Հանդիսութիւնը սկիզբ առաւ Համազգայինի նորաստեղծ դրօշի բեմ բարձրացումով, ձեռամբ Համազգայինի հիմնադիրներէն Սարգիս Մալխասեանի շատաւիղէն Ատոմ Մալխասեանի, դստեր՝ Արաքսի եւ Թորան՝ Նառայի, որմէ ետք հնչեցին Գանատայի, Հայաստանի եւ Արցախի օրհներգները, ապա ներկաները մէկ վայրկեան յոսնակա յարգեցին յիշատակը Արցախի հերոս նահատակներուն, Համազգայինի հիմնադիրներուն եւ 95 տարիներու ընթացքին Համազգայնական այն անդամներուն, որոնք առաւելու բաժնուած են մեզմէ:

Բարի գալուստի խօսքով հանդէս եկաւ Համազգայինի «Անի» պարախումբին երկար տարիներ մաս կազմած Մարի Յովհաննէսեան, որ նախ շնորհակալութիւն յայտնեց տիկին Շաքէ Կէօնճեանին՝ օրուան նախագահութիւնը ստանձնելուն համար, եւ որուն փոխանցուեցաւ գեղեցիկ ծաղկեփունջ մը, ապա իր խօսքին մէջ անդրադարձաւ 95 տարի առաջ, Գահրիբէի մէջ խումբ մը մտաւորականներու՝ Լեւոն Շանթի, Նիկոլ Աղբալեանի, Համօ Օհանջանեանի եւ ուրիշներու համախմբումով կրթական ու մշակութային այս միութեան հիմնադրութեան եւ ըսաւ. «Այսօր, այս սրահէն ներս մեզ համախմբողը նո՛յն ոգին է, նո՛յն հաւատքն ու սէրը հայ գրականութեան եւ մշակութիւնի հանդէպ, որուն սերմերը ցանած էին մեր հիմնադիրները: Այդ սերմերը 95 տարիներու ընթացքին խորապէս արմատանալով, ոչ միայն ծլած, ծաղկած, ճիւղաւորուած ու ծառացած են, այլեւ անոնց պտուղները իրենց կարգին տուած են նոր սերմեր, որոնք պիտի շարունակեն արգասաւորել ու իմաստաւորել յաջորդական սերունդներու կեանքերը»:

«Անի» պարախումբի կրտսերները, գեղարուեստական ղեկավարութեամբ Լեւոն Արապեանի, խանդավառեցին միջնորդող «Հարգումի շորթ» պարով, որմէ ետք Համազգայինի Գանատայի Շրջանային վարչութեան ատենապետ Թամար Շահինեան Փոլատեան փոխան-

ցեց իր խօսքը: «Համազգային Գանատայի Շրջանային վարչութիւնը մեծ հպարտութեամբ կը նշէ Համազգայինի հիմնադրութեան 95-ամեակը, իր Քեպէզի «Սանահին», Թորոնթոյի «Գլաճոր», Գեմպրիի «Տաթեւ» եւ Վանապուրի «Վարազ» մասնաճիւղերով: Ուրախ ենք, որ այս տօնակատարութիւններուն իր անդրանիկ այցելութեամբ, մեզի կը միանայ Կեդրոնական վարչութեան մեր ատենապետը՝ ընկեր Զաքար Քէշիշեանը: Տօնակատարութիւններու այս շարքը, յատուկ նշանակութիւն ունի մեզի համար, որովհետեւ անիկա կենդանի ապացոյցն է տասնամեակներու վրայ երկարող մեր միութեան նուաճած յաջողութիւններուն, որոնք հպարտութիւն կ'առնեն տեղւոյն մեր համայնքներուն» ըսաւ ան, ապա հակիրճ կերպով անդրադարձաւ Շրջանային վարչութեան գործունէութեան եւ աւելցուց. «Մեր երազն է մեր շրջաններուն մէջ ունենալ գեղարուեստի կեդրոններ, ուր պարը, երգը, երաժշտութիւնն ու թատերական արուեստը ուսուցանուին նոյն յարկին տակ, ուր գրական երեկոները, կերպարուեստի ցուցահանդէսներն ու փոքրերու պատմութեան ժամերը կազմակերպուին միեւնոյն յարկին տակ»: Ան անդրադառնալով միութեան դիմագրաւած դժուարութիւններուն ըսաւ. «Մեզի համար անհրաժեշտութիւն է ունենալ արհեստավարժ եւ մասնագէտ հայ արուեստագէտներ ու գեղարուեստական ղեկավարներ, որոնք իրենց կարգին կը լծուին տեղական ու ժերը վերապատրաստելու գործին ու կը հայթայթեն նոր մասնագէտներ»: Շահինեան իր խօսքը փակեց ըսելով. «Այսօրուան «Ջահակիրները» մե՛նք ենք, սակայն յաջորդական սերունդներու պարտականութիւնն է ոչ միայն շարունակել վառ պահել 95 տարիներ առաջ հիմնադիրներէն մեզի փոխանցուած ջահը, այլ զայն տարածել ու ա՛լ աւելի ուժգին բոցավառել՝ լուսաւորելու իւրաքանչիւր հայ օճախ ու յատկապէս իւրաքանչիւր հայ երիտասարդի միտքն ու հոգին»:

Ամսունքով հանդէս եկաւ Սուրբ Յակոբ Ազգ. վարժարանի շրջանաւարտ Մէրի Ահարոնեան, որ արտաստանեց «Կերտեցին քեզ իմ պապերս» կտորը, համադրութեամբ Անահիտ Թորոսեան Պալեանի՝ Մուշեղ Իշխանի «Վաղուան տունը» բանաստեղծութեան, որմէ ետք ցուցադրուեցաւ «Սանահին» մասնաճիւղի գործունէութեան մասին տեսերիզ մը, պատրաստութեամբ Թամար Շահինեանի եւ Բաֆֆի Թահմիզեանի:

«Տեսնեմ Անին ու նոր մեռնեմ» խմբերգով հանդէս եկաւ Համազգայինի «Քնար» երգչախումբը, գեղարուեստական ղեկավարութեամբ Լաուրա Պէրպէրեանի, որմէ ետք ցուցադրուեցաւ «Համազգայինը 95 տարեկան է» տեսերիզը, պատրաստուած Կեդրոնական վարչութեան կողմէ: «Քոչարի» պարով կրկին ելոյթ ունեցան «Անի» պարախումբի կրտսերները, ապա տեղի ունեցաւ պար-գեւատրուած «Սանահին» մասնաճիւղի անդամներու՝ Ռաքէլ Տեմիրճեանի, Տիրուկ Մանճիկեանի եւ Ռիթա Շամլեանի, իսկ յետ մահու՝ Յակոբ Մանճիկեանի, Լեւոն Եաղճեանի եւ Արա Ալեքսանեանի, Համազգայինի ծիրէն ներս իրենց երկարամեայ նուիրեալ աշխատանքին ի պատիւ, ձեռամբ Շրջանային վարչութեան անդամներ Թամար Շահինեանի, Անիթա Թոպիլի եւ Անահիտ Պալեանի:

Միջնորդող խանդավառողը եղաւ կրկին «Անի» պարախումբը «Լորքէ» պարով, որմէ ետք Կեդրոնական վարչութիւնը յետ մահու, յուշանուէրով պար-գեւատրեց վաստակաշատ Համազգայնական Յակոբ Եափուճեանը եւ շքան-



շաններ պարգեւեց Համազգայինի կրթական եւ մշակութային կեանքէն ներս իրենց անսակարկ նուիրումին համար համազգայնականներ Վիգէն Թիւֆէնքճեանը, Յարութիւն Պէրպէրեանը, Ֆիմի Տէր Յակոբեանը եւ օրուան նախագահ տիկին Շաքէ Կէօնճեանը, ձեռամբ Կեդրոնական վարչութեան ատենապետ Զաքար Քէշիշեանի, Գանատայի ներկայացուցիչ Թամար Տօնապետեան Գուգուեանի եւ ատենադպիր Լորիկ Սապուհեան Մատուրեանի:

Օրուան բանախօս Զաքար Քէշիշեան ողջունեց ներկաները եւ ըսաւ. «Ի՞նչ գնահատական տալ Հայաստանի Անդրանիկ Հանրապետութեան կերտիչներէն այն ընտիրներուն, որոնք ցեղապանութեան 13 տարիներ ետք, իրենց ու իրենց ընկերներուն կերտած նոյն հանրապետութեան կորուստէն 7 տարիներ ետք, երբ տակաւին սփիւռքը չէր իսկ կազմաւորուած, այնուհետեւ պատմական դարձող օր մը, հայրենի կենարար հող ու ջուրէն հեռու, Եգիպտոսի մէջ հաւաքուեցան, մտայնացան ու ստեղծեցին հայ կրթական ու հրատարակչական այս միութիւնը, որ շուտով լայն գործունէութիւն պիտի ծաւալէր իբրեւ Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային միութիւն, որ հայրենիքէն հեռու, իւրաքանչիւր հայու մտքին, սրտին ու հոգիին մէջ դրոշմել կարողանար հոգեւոր հայրենիքի գաղափարն ու նորահաս սերունդները ազգային ինքնութեան հետ ամբօրէն առնչուած պահել»: Ապա անդրադարձաւ Սփիւռքի եւ Հայաստանի դիմագրաւած տաղանապալի օրերուն, մանաւանդ Արցախի հայաթափման դժնդակ պայմաններուն Համազգայինի ծաւալած գործունէութեան ու մշակած ծրագիրներուն, յիշելով որ Համազգայինը ստեղծուեցաւ առաջ էր նոյնպէս տաժանելի օրերու, բայց շնորհիւ իր նուիրեալներուն կրցած էր գոյատեւել ու արարել մինչ օրս: Ան նաեւ անդրադարձաւ կրթական ու մշակութային մարզերէն ներս մարդուծի եւ համապատասխան մասնագէտներու ներգրաւման ու պատրաստման հրամայականին եւ յայտնեց. «Այսօր մեր սեւեռակէտը կը շարունակէ մնալ արցախահայրենիքի դժին ճակատագիրը. մեր քոյր միութիւններուն հետ այսօր լծուած ենք արցախցիներու իր իսկ հայրենիքին մէջ տարագիր, ցիրուցան ու իրաւագործը



Լուսանկարները՝ Photo Mourad-ի

հայրենակիցներուն այդ դժուարին հանգրուանին թեւ ու թիկունք կանգնելու անյետաճգելի գործին: Հետեւաբար Համազգայինի Հայաստանի ու Արցախի զոյգ գրասենեակները օրն ի բուն կ'աշխատին հոգեբարոյական աջակցութիւն ցոյց տալու Արցախի մանուկներուն»:

Ան իր խօսքը աւարտեց ըսելով. «Յանուն Համազգայինի Կեդրոնական վարչութեան սրտի անհուն սիրով ու գորովով կ'ողջունեմ Գանատայի Շրջանային վարչութիւնն ու մասնաճիւղերը, գեղարուեստի խումբերու ղեկավարներն ու անդամները, զանազան յանձնախումբերու մէջ ներգրաւուած Համազգայնականները, որոնք հայ մշակույթի ջահը արծարծ պահելով բազմաժիր ու բազմաբովանդակ ժիր աշխատանքով Գանատայի շրջանը առողջ ու օրինակելի կը պահեն»:

Հանդիսութիւնը իր աւարտին հասաւ «Անի» պարախումբի «Եարխուշտա» պարով, ապա ներկաները ուղղուեցան «Հաճէթեան» մարզադահլիճ, ուր տեղի ունեցաւ հետեւեալ արուեստագէտներուն՝ Պետրոս Ասլանեանի, Կարօ Մարկոսեանի, Արեգ Էլիպէքեանի, Վաչէ Առաքելեանի, Լենա եւ Հրայր Խաչերեաններու, Կապի Թերզեանի եւ Էտիկ Բերգեանի նկարչական գործերու վաճառք, ինչպէս նաեւ ցուցադրուեցան տիկին Շաքէ Կէօնճեանի ասեղնագործած գորգերէն մէկ քանին: Հիւրասիրութեամբ եւ 95-ամեակի կարկանդակի հատումով վերջ գտաւ հանդիսութիւնը:

Սոնա Թիթիզեան Կետիկեան

ՀՕՄ-ի Թորոնթոյի «Ռուբինա» մասնաճյուղի կազմակերպած «Տոհմիկ Օր»ը ձօնուեցաւ Լիբանանի հայ գաղութին

Սիփուքի բարախոյ սիրտը՝ չքնաղ Լիբանան

ՀՕՄ-ի Թորոնթոյի «Ռուբինա» մասնաճյուղի կազմակերպած «Տոհմիկ Օր»-ու 29-րդը՝ «Սիփուքի բարախոյ սիրտը» չքնաղ Լիբանան» խորագիրը կրող ձեռնարկը տեղի ունեցաւ երկու օրերու տեւողութեամբ, 24 եւ 25 Փետրուար 2024-ին: Սոյն ձեռնարկը, որ տեղի պիտի ունենար 28 եւ 29 Հոկտեմբեր 2023-ին, յետաձգուած էր, առ ի գորակցութիւն բռնի տեղահանուած Արցախի մեր հայրենակիցներուն:

Ձեռնարկէն շարքեր առաջ տոմսերը սպառած էին, բարձր էին տրամադրութիւնները, «Տոհմիկ Օր»ու յանձնախումբի անդամները անվերապահ նուիրուածութեամբ կ'աշխատէին, որպէսզի ձեռնարկը յաջողութեամբ պատկուի:

Հասաւ շատ սպասուած օրը, եւ Հայ կեդրոնը լի էր հոծ բազմութեամբ: Մուտքին, մեծ պատաստի վրայ, հայերէնով, արաբերէնով, ֆրանսերէնով եւ անգլերէնով արձանագրուած էր հետեւեալ խօսքը՝ «Բարի եկաք Լիբանան», եւ սեղանի մը վրայ հիւրերուն համար տեղադրուած էին լիբանանեան «ժալլապ» կոչուած խմիչքները: Նախարահին մէջ գետեղուած էին Անթիլիասի Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսարանի եւ Հարիսայի Աստուածածնայ Ուխտավայրի քանդակները, հայերէն եւ անգլերէն բացատրութիւններով: Ուշաբուր քրքրազարդ գետեղուած Պիքֆայիայի Հայոց Յեղասպանութեան Նահատակաց յուշարձանը: Գրակալներու վրայ ցուցադրուած էին Լիբանանի մայրիներու, Ս. Նշան Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ, Ղազիրի որբերուն գորգի նկարները՝ երկլեզու (հայերէն եւ անգլերէն) բացատրութիւններով: Նախարահին աւելի խորը, պատին վրայ տեղ գտած էր Հայերու Շուկան, «Սուր էլ Արման», ուր կը վաճառուէին Լիբանանէն բերուած յուշանուէրներ եւ արուեստի գործեր: Շուկային կողքին կը գտնուէր գեղեցիկօրէն պատրաստուած լիբանանեան սենեակը, իւրապատուկ նստարաններով, բարձրով եւ իրերով, ուր փափաքողները յիշատակի նկարներ կ'առնէին:

Արահի դռները բացուեցան եւ բեմին ետեւը պատկերուած Պապալէքի հնութիւնները մեզ դիմաւորեցին: Իւրաքանչիւր ընտանիք կը ստանար Լիբանանի հայ գաղութին ձօնուած, եզակի բժայնորութեամբ պատրաստուած եւ հետաքրքրական տեղեկութիւններով լի գիրքերը: Պատերը զարդարուած էին Լիբանանը խորհրդանշող տեսարժան վայրերու լայնածաւալ նկարներով, իսկ ցուցատախտակներու վրայ գետեղուած էին փողոցներու անունները, եւ իւրաքանչիւր սեղանի թիւ կը կրէր գիւղի կամ քաղաքի մը անունը: Ամէնէն յատկանշական երեւոյթը ժուռիէն Հարիսա բարձրացող ճոպանուղիներն էին: Այս բոլորին հետ միատեղ Վարազ Մեսրոպեանի պատրաստած տեսերիկները եւ նկարաշարի տեսանիւթը լիբանանահայ երգիչներու երգերու եղանակներու ընկերակցութեամբ, մեզ մտքով փոխադրեցին «Չքնաղ Լիբանան»:

Հանդիսավարներ Ջանի Շահինեան Մեսրոպեան եւ Ալին Թիթիգեան բարի գալուստ մաղթեցին ներկաներուն: Զանին իր խօսքին մէջ ըսաւ. «Մենք այսօր ճամբորդութեան առաջնորդը պիտի ըլլանք դէպի մեր ծննդավայրը, երկրի վրայ կտոր մը երկինք՝ Լիբանան»:

Բացման խօսքով հանդէս եկաւ «Տոհմիկ Օր»ու համաստեանապետ ընկերուհի Զեփիլո Տորնան եւ նշեց. «Հայ Օգնութեան Միութեան մեծ ընտանիքը իր 114-ամեայ կեանքը արժեւորեց, հաւատարիմ իր առաքելութեան»:

բարեսիրական, ընկերային, դաստիարակչական եւ հայակերտումի ու հայապահպանման բնագաւառներէն ներս փայլուն գործունէութեամբ: Առաւել՝ ՀՕՄ-ը հայկական պատմական արժէքները, մշակութային հարստութիւնն ու հայկական բարքերը պահպանելու, տարածելու եւ սերունդէ սերունդ փոխանցելու սրբազան նպատակը կը հետապնդէ: Ահա այս գծով է որ ՀՕՄ-ի Թորոնթոյի «Ռուբինա» մասնաճյուղը, ճիշդ 30 տարիներ առաջ, տարեկան դրութեամբ սկսած է կազմակերպել Տոհմիկ Օրեր: Այս տարի կարգը եկած է մեր սիրելի եւ չքնաղ Լիբանանին: Տարիներէ ի վեր Սիփուքի գանազան գաղութներու մէջ լիբանանահայեր մաս կազմած են հայկական գաղութներու ղեկավար մարմիններուն: Հետեւաբար, Լիբանանը իսկապէս դարձած է Սիփուքի բարախոյ սիրտը եւ մղիչ ուժը: Այսօր իսկ, երբ Լիբանանը կ'ապրի տնտեսական եւ ընկերային դժուար օրեր լիբանանահայութիւնը յարատեւ եւ կը պահէ Սիփուքի մէջ իր նոյն դերակատարութիւնը»: Ընկերուհի Տորնա շարունակեց, ըսելով որ այս ձեռնարկի հասոյթէն կոկիկ գումար մը պիտի ուղարկուի Լիբանանի հայ գաղութի մարդկային օժանդակութեան ծրագիրներուն եւ ապա շնորհակալութիւն յայտնեց բոլոր հովանաւորներուն, նուիրատուներուն, գիրքի յօդուածագիրներուն, երկու օրերու յայտագրին մասնակցող բոլոր արուեստագէտներուն, գրուցաբերներուն, ինչպէս նաեւ բոլոր անոնց, որոնք գանազան ձեռքով նպաստեցին այս ձեռնարկի յաջողութեան:

Թամար Տօնապետեան Գուգուեան, որ գեղարուեստական բաժնի համադրման պատասխանատուն էր, հանդէս եկաւ արուեստավարժ ձեռով պատրաստած իր բեմական խօսքով եւ յուզմունքով յիշեց իր պատանեկութեան շրջանը, որ անցուցած էր այդ օրերու ետեւ կեանք ունեցող Լիբանանի մէջ, ապա Յարութիւն Պէրպիլեանի յուշերէն մէջ՝ բերումներ կատարեց: Այնուհետեւ Թամար ասմունքով հանդէս եկաւ Մուշեղ Իշխանի «Տեսնե՛մ Արդեօք», Վեհանոյ թեքեանի «Պէրպիլ» եւ Փանոս Ծերանեանի «Լիբանան» քերթուածներով: Տօնապետեան Գուգուեան խօսքը աւարտելէ ետք ըսաւ, որ այսօր պատիւ կը զգայ բեմ հրաւիրելու այն հրաշք մանուկը, որ «Սթիւտիօ Ֆանի» օրերէն մեր սրտերը գրաւեց՝ աշխարհահռչակ դաշնակահար, յօրինող, բոլորիս սիրելի Սէրուժ Գրաճեանը:

Գրաճեան շնորհակալութեան խօսք ուղղեց Թամար Տօնապետեան Գուգուեանին, ՀՕՄ-ի «Ռուբինա» մասնաճյուղին եւ «Տոհմիկ Օր»ու յանձնախումբին՝ հրաւիրելու համար եւ իր խօսքին մէջ շեշտեց, որ թէեւ ինք 13 տարեկանին ձգած է Լիբանանը, սակայն Լիբանանը գինք երբեք չէ ձգած եւ միշտ իր հոգիին մէջ մնացած է: Ան յիշեց, թէ ինչպէ՛ս «քաղաքացիական պատերազմին ընթացքին, մէկ կողմէ մեր դպրոցները, եկեղեցիները, ակումբները, մշակութային, բարեսիրական եւ մարզական հաստատութիւնները, միւս կողմէ մեր տնօրէնները, ուսուցիչները, քաղաքական եւ հոգեւոր ղեկավարները ստեղծած էին եզակի մթնոլորտ մը, որ կը բաշխէր հայրենասիրութիւն, հայեցի դաստիարակութիւն, խաղաղութեան եւ լիբանանեան հայրենիքի հանդէպ անսակարկ նուիրում եւ ամենակարեւորը՝ մթնոլորտ մը, որ կը սորվեցնէր արժանապատուութիւն՝ ի գին ամէն գոհողութեան: Իմ մտքիս մէջ մնացած է Լիբանանի յատուկ արտայայտութիւն մը, “մալեշ” բառը, բառ մը,



որուն մէջ խտացած են լիբանանցիի վերապրելու եւ վերաշինելու տենչը, ինչպէս նաեւ ներելու պատրաստակամութիւնը»:

Այնուհետեւ, Գրաճեան ներկաներուն հրամցուց երաժշտական բարձրարուեստ եւ բարձրորակ կատարումներ եւ հանդէս եկաւ իր մշակած դաշնաւորումով, լիբանանցի երգչուհի Ֆէյրուզի երկու երգերով «Պէրպիլ եւ Լըպան» եւ «Նասամ ալայնա էլ հաուա», ներկաներուն մէջ ստեղծելով յոյզերու աշխարհ մը, իսկ իր «Զարթիւր Լաօ» ով մեծապէս խանդավառեց ներկաները:

Հասաւ մեծարեալներու գնահատանքի պահը. ընկերուհի Հուրի Նաճարեան ներկայացուց երեք մեծարեալներ՝ Դոկտ. Արաքսի Ալթունեանի, Պրն. Սէրուժ Գրաճեանի եւ Գերշ. Տէր Բարբէն Արք. Չարեանի կենսագրութիւնները եւ իրենց արժանիքները: Ապա մեծարեալները բեմ հրաւիրուեցան եւ ՀՕՄ-ի «Տոհմիկ Օր»ու համաստեանապետներ Զեփիլո Տորնայի եւ Սիլվի Օհանեանի ձեռամբ, իւրաքանչիւրին նուիրուեցաւ Հայաստանէն յատկապէս բերուած եւ շրջանակուած մանրանկարչութեան արուեստի նմոյշներէն օրինակներ:

Գանատայի Հայոց թեմի առաջնորդ Գերշ. Տէր Բարբէն Արք. Չարեան իր սրտի խօսքը փոխանցեց եւ կարեւորեց, թէ մենք Լիբանանը կը տեսնենք ոչ սովորական երկիր մը, Լիբանանը մեր ծննդավայրն է, մեր տունն է, հոն ուր մենք թրծուեցանք, ուղեւորուեցանք եւ զարգացանք: Յեղասպանութենէն յետոյ լիբանանահայը շատ դժուար պայմաններու տակ չի նեղ թիթեղաչէն դպրոցներ, եկեղեցիներ, հետզհետէ ծաղկեցաւ, ծաղկեցուց. երբ նայինք կը տեսնենք Պուրճ Համուտը, Ս. Նշան եկեղեցին, Ծեմարանը, Զմմառու վանքը, Անթիլիասի Կաթողիկոսարանը, Մատուռը, Պիքֆայիայի Յեղասպանութեան յուշարձանը, ակումբները, մեր երիտասարդութիւնը, որոնք ամենադժուար օրերուն արթուն պահակները եղան մեր ժողովուրդին: Լիբանանը մարդուժ պատրաստեց եւ պատրաստելու առաքելութիւնը ունի: Թէեւ Սիփուքի բարախոյ սիրտը ներկայիս վերաւոր է, սակայն ոտքի է եւ պիտի մնայ կանգուն:

Առատ սեղաններու շուրջ խմբուած ներկաները վայելեցին Արարատ Ահարոնեանի եւ իր նուագախումբին բացառիկ կատարողութեամբ երգերն ու նուագները: Լիբանանեան համադամ ճաշատեսակները, քաղցրեղէններու ճոխ տեսակներն ու իրուստ Arz Fine Foods-ի կողմէ, գեղարուեստական կատարումները, վիճակահանութիւնը, վկայութիւններու տեսանիւթերը, երգն ու պարը խրախուսեցին ճոխ անախրնթաց մթնոլորտ մը ստեղծած էին: Ներկաները վայելեցին «Տոհմիկ Օր»ու յանձնախումբի ամիսներ շարունակուող ժրջան աշխատանքի արդիւնքը:

«Տոհմիկ Օր»ու կերպորդ օրը Լիբանանի Հայ համայնքային կեանքը՝ զրոյցներու եւ գեղարուեստի ընդմէջէն

Կիրակի, 25 Փետրուար 2024-ին, Սուրբ եւ Անմահ պատարագէն ետք, Հոգեհանգստեան պաշտօն կատարուեցաւ Թորոնթոյի Սուրբ Աստուածածին Հայաստանեայց Առաք. եկեղեցւոյ մէջ, Լիբանանի հայ գոհերու եւ նահատակ հերոսներու յիշատակին եւ հոգիներու խաղաղութեան համար:

Նոյն օրը, յետմիջօրէին «Տոհմիկ Օր»ու յանձնախումբը կազմակերպած էր գրուցաշարք մը Հայ կեդրոնի սրահէն ներս, ուր համախմբուած էին թորոնթոյի հայերը: Սրահի նկարներուն, իրերուն եւ զարդերուն կողքին՝ ներկաները ըմբոշինեցին լիբանանահայերու կողմէ հաւաքուած վկայութիւններու տեսանիւթեր՝ Լիբանանի եւ այլ երկիրներու մէջ բնակող ազգայիններէ:

Բարի գալուստի խօսքով հանդէս եկաւ օրուան հանդիսավար ընկերուհի Սոնիա Գրաճեան: Ան ներկաները ողջունեց ժպտան խալի ժպտանի հետեւեալ խօսքերով «Եթէ Լիբանանը երկիր չըլլար, ես պիտի ուզէի Լիբանանը ընտրել որպէս իմ երկիրը»: Երախտագիտութեամբ կ'ողջունենք ձեզ ըսաւ Գրաճեան, որպէսզի այսօր միասնաբար դրուատենք ու մեր մտքերը հարստացնենք, ըմբոշինելով լիբանանահայութեան հարուստ մշակոյթը Լիբանանի մէջ եւ այլուր:

Բացման խօսքով հանդէս եկաւ «Տոհմիկ Օր»ու յանձնախումբի համաստեանապետ Սիլվի Օհանեանը եւ շեշտեց. «Մեր մասնաճյուղի հիմնած Տոհմիկ Օրերու միջոցառումները կը նպաստեն հայկական մշակոյթը ծանօթացնելու, զարգացնելու եւ անոր սէրը ծաղկեցնելու ներկայ սերունդին մէջ: Այս ձեռնարկներու եկամտները կը նպաստեն մասնաճյուղիս կատարած նիւթատան յատկացուածներուն, իսկ այս տարի հասոյթէն կոկիկ գումար մը ՀՕՄ-ի ճամբով պիտի ուղարկուի օժանդակելու Լիբանանի հայ գաղութի մարդասիրական ծրագիրներուն»: Ընկերուհի Օհանեան վարչութեան անունով շնորհակալութիւն յայտնեց երկու օրերը ճոխացնող արուեստագէտներուն, գրուցաբերներուն եւ գեղարուեստական բաժնի մասնակցողներուն, բոլոր հովանաւորներուն եւ նուիրատուներուն որոնց նիւթական աջակցութեամբ հնարաւոր եղաւ այս զոյգ ձեռնարկները յաջողութեամբ կազմակերպել, ապա գնահատանքի խօսք ուղղեց յանձնախումբի անդամներուն իրենց երկար ամիսներու անվարան եւ նուիրեալ աշխատանքին համար, որոնք երկու օրերու ընթացքին ճիշդ չխնայեցին հարուստ յայտագիր մը հրամաններու եւ շքեղօրէն յարգարելու սրահը, ինչպէս նաեւ գնահատեց Լիբանանի հայ գաղութին ձօնուած «Տոհմիկ Օր»ու կերպորդ (հայերէն եւ անգլերէն) գիրքի հրատարակութիւնը, որ վստահաբար մեծապէս պիտի գնահատուի բոլորին կողմէ:

Այնուհետեւ, հանդիսավարը ներկայացուց գրուցավարը, գրուցաբերները

Մոնթրեալի մէջ պաշտօնական հանդիսութեամբ Աշուեցաւ Համազգայինի պաշտօնատեղի «Բագին»ի 60-ամեակը

Չորեքշաբթի, 13 Մարտ 2024-ին, երեկոյեան ժամը 7:00-ին, Մոնթրեալի Հայ կեդրոնի «Ահարոնեան» սրահէն ներս, հանդիսաւոր կերպով տեղի ունեցաւ Համազգայինի պաշտօնատեղի «Բագին»ի 60-ամեակին նուիրուած պաշտօնական հանդիսութիւնը, բարձր հովանաւորութեամբ Համազգայինի Կեդրոնական վարչութեան, հովանաւորութեամբ Համազգայինի Գանատայի Շրջանային վարչութեան, կազմակերպութեամբ Համազգայինի Քեպէզի «Սանահին» մասնաճիւղի վարչութեան, գործակցութեամբ «Բագին» պաշտօնատեղի խմբագրութեան, ներկայութեամբ Համազգայինի Կեդրոնական վարչութեան ատենապետ Զաքար Քէշիշեանի, եւ ատենապետ Լորիկ Սապունճեանի, Գանատայի Շրջանային վարչութեան ատենապետ Թամար Շահինեանի եւ անդամներու, Վերապատուելի Մհեր Խաչիկեանի, Սուրբ Յակոբ Առաջնորդանիստ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Տ. Գառնիկ Ա. Քհն. Գոյունեանի, ՀՅԴ Բիւրոյի անդամ Բաֆֆի Տոնայեանի, Գանատայի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ Խորէն Տիմիթեանի, Մոնթրեալի «Միհրան Փափազեան» կոմիտէի անդամ Յարութ Գալիթեանի, քոյր միութիւններու ներկայացուցիչներու, գրասէրներու ու «Բագին» ընթացողներու հոծ բազմութեան:

Բացման խօսքով հանդէս եկաւ «Բագին»ի Խմբագրական խորհուրդի անդամ Անոյ Ակնեբեան, որ նախ ողջունեց ներկաները, ապա ըսաւ. «Բագին»ի անդամները թիւի խմբագրականը կը խօսի այդ օրերու «կեդրոնական ու կեդրոնաձիգ բեմի մը» բացակայութեան մասին, այսինքն՝ Սփիւռքի «գրողները քով քովի բերելու, աշխատանքի մղելու, աշխատութիւնները արժանաւորապէս ներկայացնելու խանդավառ միջոցի» պակասին մասին, եւ հետեւեալ հաստատում-խոստումը կ'ընէ մանիֆեստի նման. «Բագին կոչուած է այդ կեդրոնական ու խանդավառ բեմը ըլլալու»: Ուրեմն՝ Բագին ինքզինք կը սահմանէ որպէս խորան, ուր հին ու մանաւանդ նոր սերունդներու գրողները իրենց լաւագոյնը պիտի բերեն բարձր գրականութեան սեղանին: Եւ այդպէս ալ եղաւ աւելի քան 60 տարիներ», ապա նշեց, թէ «Բագին»ի 60-ամեակը կը զուգարկապէս համաճարակի տարիներուն, որուն յաջորդեց նաեւ Արցախի հայրենիքի ճակատագրական դէպքերն ու շատ մը օտակատարութիւններու առկայութիւնը, հետեւաբար այս տարի առիթը ընծայուեցաւ զայն նշելու:

Համազգայինի Քեպէզի «Սանահին» մասնաճիւղի վարչական եւ Գրական յանձնախումբի ներկայացուցիչ Նանոր-Աշնա Մնայեան ընթերցեց «Բագին»ի առաջին թիւի խմբագրականը, որ կ'անդրադառնար «Բագին»ի ծնունդը տուող պայմաններուն՝ այսպիսով. «Հայութեան արեւմտեան հատուածը, որ պայմաններու բերումով Սփիւռքի հայութիւն կը կոչուի այսօր, ժառանգորդ է զանգուածեղ գրականութեան մը: Այդ ժառանգութեան աւանդապահը դառնալու եւ անոր վրայ յաւելում մը բերելու նուիրական պարտականութիւնը առաւելագոյն չափով մը կը պատկանի գրական կենսունակ ուժերուն: Մեծ իրագործումներու հասած այդ զանգուածին ստեղծագործ կարողութիւններուն հանդէպ մեր ունեցած հաւատքը կը մղէ մեզ, որ հիմը դնենք այս նոր հանդէսին»:

Հանդիսութեան առաջին բանախօսն էր բանաստեղծ մտաւորական, «Բագին»ի նախկին խմբագիր Յարութ Պէրպէրեան: «Բագին»ի առնչուած իր յուշերով սկսաւ ան իր բանախօսու-

թիւնը, երբ մաս կազմած էր անոր խմբագիր Պօղոս Մնայեանի շուրջ հաւաքուած երիտասարդ գրողներու խմբակին ու անկէ ետք երկար տարիներ աշխատակցած է «Բագին»ին իր յօդուածներով, ապա որպէս խմբագիր եւ խմբագրակազմի անդամ: Ան յիշեց, թէ տարբեր սերունդներու գրողներ «Բագին»ի մէջ հանդէս եկած են, սկսելով Յեղասպանութենէն մագապուրծ ազատած մեր մեծ գրողներէն, հասնելով մինչեւ Սփիւռքի զանազան մեր գրագէտներուն. օրինակ՝ Համաստեղ, Նշան Պէշկիթաշեան, Լեւոն Գարմէն, Կարօ Սասունի, Բարբէն Փափազեան, Յարութեան Գազանճեան, Գեղարդ, Ոսկունի, Վահէ Օշական, Պօղոս Մնայեան, Ներսէս Վիրապեան, Յակոբ Մանուկեան եւ ուրիշներ, ապա հասնելով նաեւ այսօրուան երիտասարդ ու նոր յայտնաբերուած գրողներուն:

Պէրպէրեան իր վկայութիւններով ու «Բագին»ի անցած ճանապարհը նկարագրելով հակիրճ կերպով անդրադարձաւ անոր կազմաւորման, զարգացման, ունեցած կարեւոր ու կենսաբար դերակատարութեան Սփիւռքեան գրականութեան ու արեւմտահայերէնի պահպանման ու ծաղկումին: Ան յատուկ կերպով անդրադարձաւ «Բագին»ի «Նշմանք» բաժնին ստեղծած խանդավառութեան, ապա իր խօսքը փակեց ըսելով. «Հարկ է նշել, որ «Բագին»ը իրապէս կրցաւ ըլլալ այն հարթիւնը, ուր արեւմտահայ գրականութիւնը ծաղկեցաւ շատ դժուար պայմաններու մէջ. այսօր ան կը շարունակէ մնալ պատմելի վրայ նոյնպէս դժուար պայմաններու մէջ, երբ դժբախտաբար միւս գրական հանդէսները դադարեցան գործելէ. ինչպէս՝ «Նայիրի»ն, «Շիրակ»ը, «Երիտասարդ հայր» եւ այլն, համահայկական միակ գրական հանդէսը կը մնայ «Բագին»ը, այս պատճառով ալ համասփիւռքեան իմաստով շատ կարեւոր է «Բագին»ի ներկայութիւնը, թէկուզ ի գին լուրջ գոհողութիւններու»:

Յուշագրուեցաւ «Բագին»ի մասին վկայութիւնները՝ տեսանիւթը, պատրաստութեամբ Համազգայինի Կեդրոնական վարչութեան, ապա Սեւակ Աֆարեան ընթերցեց Բագինի 60-ամեակի թիւին խմբագրականը, որուն մէջ նշուած էր հետեւեալը. «Բագին»ի վաթսուամեակին նուիրուած այս յօդուածն անհամար չի յաւակնիր ամազգի ամբողջական դիմագիծը տալու, ոչ ալ կազմուած է ծաղկաբաղի սկզբունքներու հիմամբ: Ընտրութիւնը կատարած ենք «60 տարի, 60 անուն» բնաբանով, եւ ի մի բերած ենք գրութիւններ, որոնք իրենց արժարժած նիւթերով, հարցադրումներով, մտահոգութիւններով եւ լեզուամտածողութեամբ կը ներկայացնեն թէ՛ սփիւռքեան ինքնութեան զանազան երեսները եւ թէ՛ անոր զարգացումը»:

Երեկոյին երկրորդ բանախօսն էր «Բագին»ի խմբագիր Սոնիա-Սանան Քիլիճեան, որ իր խօսքը սկսաւ ըսելով. «Ո՞վ կրնար երեւակայի, որ որբերու ու ցնցոտիներու սերունդէն, պապանձումի մատնուած ամբողջ ամբոխ մը, արհաւիրքի պատկերը ստուած դէմքին, աղէտը ապրելով հանդերձ, պիտի վերածնէր նոր հայութիւն մը, եւ նոր ծնող երեխաներու շրթներուն պիտի ծաղկէր ու զարգանար նոր հայերէն մը՝ շարունակութիւնը հազիւ 50 տարի առաջ ինքզինք ազատագրած աշխարհաբարին, ու այս անգամ պիտի զարգանար երկրէ երկիր տարածուող մամուլի ցանցով մը, շուտով ինքզինք գտնելու համար իբր կատարելապէս կանոնակարգուած գրական լեզու մը», ապա անդրադառնալով Բագինի առ այսօր գոյատեւման, հակառակ



սփիւռքեան այլ հանդէսներու փակման տխուր իրողութեան՝ Քիլիճեան ըսաւ. «Բագինը կայ, որովհետեւ 100 տարի առաջ վերածնած հայութիւնը այս լեզուին մէջ գրաւ իր հաւատքն ու ապագայի տեսիլքը: Այդ տեսիլքն է, որ Պէշկուրի հրաշքէն ետք կը շարունակուի ահա այսօրու տարի: Դիւրին է լողունդներով խանդավառել ու խանդավառուել. բոլորս դէպի հայրենիք: Անշուշտ հայրենիքը իբրեւ ֆիզիքական իրողութիւն անփոխարինելի է: Ինչ որ սակայն այս ժողովուրդը ստիպեցաւ անհաւատալի զոհողութեամբ այն է, որ լեզուն ալ հայրենիք մըն է: Այդ հայրենիքին մէջ է, որ ահա հասակ առինք սերունդներով իբրեւ խիտ հայութիւն, եւ այդ լեզուով է, որ ծնաւ ամբողջ գրականութիւն մը, առանց որուն մենք ալ այսօր պիտի չկարենայինք ըսել՝ «մենք ալ կա՛նք»: Կա՛նք, որովհետեւ գրականութիւն մը կայ»:

Խմբագիրը իր խօսքը փակեց ըսելով. «Մերը սակայն՝ իբրեւ վերածնեալ հայութիւն, իսկական վերջաւորութեան մը փորձառութեանն է ծնաւ: Մենք մեր վերջաւորութիւնը տեսանք գրեթէ մահուան աւազներուն վրայ: Ահա այսօր այս տողերը կը գրենք իբրեւ վերջաւորութեանն եկած հայր: Այս լեզուն կը գրենք ու կը խօսինք իբրեւ վերջաւորութեանն էն ծնած լեզու, որ ծնաւ կրկին որբանոցներէն ու դարձաւ հայութեան լեզուն աշխարհով մէկ: Ասիկա է մեր փորձառութիւնը: Իւրայատուկ փորձառութիւն մը, գրեթէ առանց զուգահեռի, որ ունեցած է, ունի ու տակաւին միշտ կը ստեղծէ իր գրողն ու գրականութիւնը: Ահա այդ դիտակցութեամբ է, որ Համազգա-

յինն ու ընթացողներու ամբողջ համայնք մը կը շարունակենք հրատարակել ու տարածել այս պարբերականը, որուն անունը մեր պատանութեան օրերէն սիրելի էր, եւ որուն հրատարակութիւնը կը շարունակենք ի հեճուկա բոլոր դժուարութիւններուն»:

«Բագին»ի եւ Համազգայինի Կեդրոնական վարչութեան կողմէ տեղի ունեցաւ «Բագին»ի յուշանուէրի տուչութիւն, «Բագին»ի եւ Համազգայինի մեծ ընտանիքին անդամ Գէորգ Գափարիկեանին, որ տարիներ շարունակ, սիրայօժար կերպով «Բագին»ի թիւերը կը հասցնէր բաժանորդներուն, նախքան պարբերակներին ուղղակի բաժանորդներու հասցէներուն առաքուելուն սկսիլը: Ան նաեւ եղած է Համազգայինի վարչական Հալէպի եւ Մոնթրեալի մէջ, որոնց ընթացքին խղճմտօրէն ծառայած է եւ օրինակ հանդիսացած իր գործակիցներուն:

Հանդիսութիւնը փակուեցաւ Լիբանանէն ժամանած Համազգայինի Կեդրոնական վարչութեան ատենապետ Զաքար Քէշիշեանի գնահատական խօսքով, որ նախ իր վկայութիւնը փոխանցեց երիտասարդութեան տարիներէն ի վեր «Բագին»ի առնչութեամբ, ապա շնորհաւորեց անոր 60-ամեակն ու նորանոր նուաճումներու մաղթանքներով փակեց իր խօսքը: Քէշիշեան իր խօսքը աւարտելէ ետք սրինգով նուագեց «Օտար, ամայի ճամբէքի վրայ» կտորը եւ զայն նուիրեց օտար ու ամայի ճամբէքի վրայ յամառօրէն իր երթը շարունակող «Բագին»ին:

Սոնա Թիթիզեան Կէտիկեան

www.horizonweekly.ca

CONNECT WITH US:

- facebook.com/pages/horizonweekly
- @horizonweekly
- horizonweekly
- YouTube – Horizon Weekly TV

Ունկնդրեցէ՛ք Գանատայի տարածքին սփռուող հայկական ռատիօժամերը՝

ՎԱՆԳՈՒԿԵՐ- «Armenian Variety Show» Coop Radio 100.5 FM
Երեքշաբթի երեկոյները ժամը 6:00-7:00

ԼԱՄԼ- «Հայ Կեդրոնի Ձայն» 105.1 FM
ACC Laval Radio Program
Շաբաթ եւ Կիրակի առաւօտեան ժամը 7:30-9:00

ՄՈՆԹՐԵԱՆ- «Վանայ Ձայն» 1450 AM
Երկուշաբթի երեկոյները ժամը 8:00-10:00

ՀԱՍԻԼՈՅԸ- «Հայ Կեդրոնի» ռատիօժամ CFMU 93.3 FM
Կիրակի առաւօտեան 10:00-11:00
cfmu.mcmaster.ca

Համազգայինը հայահալաքի կազմակերպությունն է, որուն շուրջ կը հաւաքուին բոլոր անոնք, որոնք որոշած են հայօրէն ապրիլ

Համազգայինի Կեդրոնական վարչութեան ատենապետ Զարար Քեշիշեանի խօսքը Համազգայինի 95-ամեակի Գանատայի հանդիսութիւններուն.

Ի՞նչ գնահատական տալ Հայաստանի անդրանիկ հանրապետութեան կերտիչներէն այն ընտրանիին, որոնք Հայոց Յեղասպանութենէն 13 տարիներ ետք, իրենց ու իրենց ընկերներուն կերտած նոյն հանրապետութեան կորուստէն 7 տարիներ ետք, երբ տակաւին սփիւռքը Հէ՛ր իսկ կազմաւորուած, այնուհետեւ պատմական դարձող օր մը, հայրենի կենարար հող ու շուրջն հեռու, Եգիպտոսի մէջ մտայղացան, հաւաքուեցան ու ստեղծեցին Հայ Կրթական ու Հրատարակչական այս միութիւնը, որ շուտով պիտի վերակոչուէր ու լայն գործունէութիւն ծաւալէր իբրեւ Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութիւն, որ հայրենիքէն հեռու, իւրաքանչիւր հայրրդի մտքին, սրտին ու հոգիին մէջ դրոշմել կարողանայ հոգեւոր հայրենիքի գաղափարն ու նորահաս սերունդները ազգային ինքնութեան հետ ամբողջ կամրջուած պահել: Ըսել միայն, թէ անոնք մարգարէատիպ այրե՞ր էին ու անցնի՞լ:

Ինչպէ՞ս անուանել այն բազմահազար հայորդիները, որոնք հետեւելով հիմնադիրներու սերունդին ստեղծած աւանդներուն, միացան ու 95 երկար ու ձիգ տարիներ, հետեւողական կերպով, կամուր հիմունքով, վարչական զանազան կառույցներու մէջ հսկայածաւալ ու արդիւնաւէտ աշխատանք տարին, որ հայ լեզուն շարունակ ծաղկիլ նորահաս մանկանց շուրթերուն, որ հայ աշակերտը շարունակէ հայկական դպրոց յաճախել, հայ գիրն ու գրականութիւնը շարունակէ տպագրուել ու տարածուել, հայ երգն ու նուագը շարունակեն հնչել ու զրնգալ, հայ պարը շարունակէ թնդալ ու թնդացնել, հայ թատրոնը նոր բեմադրութիւններով օժտուի, այլ խօսքով՝ սփիւռքացած հայութիւնը պահէ՛ իր մշակոյթը եւ շարունակէ ազգացնել զայն: Ըսել միայն, թէ անոնք առաքելատիպ նուիրեալ մարդիկ են ու անցնի՞լ:

Ինչպէ՞ս յորժորջել սփիւռքի մեր գեղարուեստի խումբերուն պարուսոյցներն ու խմբավարները, բեմադրիչներն ու կերպարուեստի ուսուցիչները, որոնք սփիւռքի զանազան ասիներուն, իրենց մասնագիտական ասպարէզը նուիրաբերեցին հայ իրականութեան մէջ գործելուն, նորահաս հայ սերունդը իր մշակութային արմատներուն հետ կամրջելուն: Ըսել միայն, թէ անոնք հայ արուեստագէտներ են ու անցնի՞լ:

Ի՞նչ անուն տալ մարդկանց այն տեսակին, «Աղքատին լուծան» ներդնողներէն մինչեւ մեծագումար նուիրատուներուն, որոնք անցնող 95 տարիներուն Համազգայինի առաքելութեան յաջողութեան, կառույցներու շինարարութեան թէ՛ այդ կառույցներուն մէջ գործող ստեղծագործական խումբերուն անխափան գործունէութեան համար կատարեցին նիւթական նուիրատուութիւն: Ըսել միայն, թէ անոնք բարեխիտ բարերարներ են ու անցնի՞լ:

Պահ մը եկէ՛ք միասին ընդգծենք ու շեշտադրենք այս իրողութիւնը. աշխարհագրական 19 շրջաններ, ուր բոլոր հայութիւն կայ, մեծաթիւ հայորդիներ հաւաքուած են զանազան վարչութիւններու եւ յանձնախումբերու մէջ ու մասնակից են հայապահպանական լուրջ առաքելութեան մը: Նոյնքան ու աւելի վայրերու մէջ կը գործեն նաեւ մեր քոյր միութիւնները՝ ՀՕՄ-ն ու ՀՄԸՄ-Ը, որոնց հետ միատեղ անցանք մեր ճամբան ու այս առիթով, մեր սրտագին ողջոյնը կը յղենք անոնց:

Եթէ ո՛չ միայն ծնունդով, այլեւ սեփական որոշումով հայ ես, քեզի համար կա՞յ աւելի հոգեկից եւ զուարթ կենսակերպ մը, երբ գաղափարական գիտակցութեամբ նուիրեալ մասնակից մըն ես, անհրաժեշտ եւ անփոխարինելի մասնիկ մըն ես Համազգայնականի միութեանական կեանքին, որուն 95-ամեակն է արդէն եւ որուն շնորհիւ, իբրեւ իրերայաջորդ սերունդներու ժառանգորդը, անվերապահօրէն եւ հպարտօրէն կրնաս յայտարարել, որ դուն կա՞ս, կը մնա՞ս, եւ որ թշնամին չէ՛ կրցած, չի՛ կրնար ու պիտի չկարենա՞յ զգետնել քեզ:

Միւս կողմէ սակայն, Համազգային Հայ Կրթական ու Մշակութային Միութեան հիմնադրութեան յոբելեանական հանդիսութեանց շարքը, հայրենիքի թէ՛ սփիւռքի մէջ, կատարեցինք ու կը շարունակենք կատարել հայութեան համար ամէնէն զժողով ու օրհասական օրերուն. իրապաշտ ըլլանք ու հաստատենք, որ՝

- Ամբողջութեամբ հայաթափ է մեր պատմութեան վերջին 35 տարիներու կիզակէտը հանդիսացող հերոսական Արցախը: Արցախահայութիւնը անորոշ ճակատագրի մատնուած է ու Հայաստանի մէջ թէ՛ արդէն Հայաստանէն դուրս կը կրէ բազմապիսի տագնապներ:

- Ազգովին դեռ կը գտնուինք թմբերի մէջ եւ հայոց արդի վտանգալից կացութեան նկատմամբ անտարբերներուն թիւը, մանաւանդ Հայաստանի մէջ, օրէ

օր կ'աճի:

- Սփիւռքը հետզհետէ կը կորսնցնէ իր երբեմնի կենսունակութիւնը ու հայրենամերձ գաղութները կը դիմագրաւեն քաղաքատնտեսական մեծ ու անյաղթահարելի թուացող դժուարութիւններ:

- Հայախօսութիւնն ու հայեցի մտածելակերպը աղետալի անկումի մէջ են գրեթէ ամէնուրեք, ու արեւմտահայերէնը արդէն կը դատուի վտանգուած լեզուներու շարքին:

- Յաջողութիւն արձանագրած են պառակտման ճամբով հայութիւնը տկարացնելու միտող ապագային ու օտարակեղծոն փորձերը, ու խաթարման վտանգի տակ է սփիւռքի մէջ՝ հայրենիքին համար ու հայրենական հեռանկարով ապրելու մեր գոյերթին գաղափարական իմաստը:

Ահա այս մարտահրաւէրներու գիտակցումով է, որ Համազգայինը այսօր, աշխարհասփիւռ շրջաններու ու հայրենիքի մէջ կը նշէ իր հիմնադրութեան 95-ամեակը եւ մեր ամէնէն կենսունակ ու կազմակերպ շրջաններէն մէկուն՝ Գանատայի մէջ, այսօր, մենք կ'ուրուագծենք դէպի 100-ամեակ ընթացող մեր հեռանկարներէն մէկ քանին.

- Առաջին հերթին, պիտի պահուին, պահպանուին ու առաւել ծաղկին հինէն մեզի ժառանգուած կառոյցներն ու արժէքները: Առաւել պիտի կազմակերպուին մեր ճեմարանները, հրատարակչական ու գրատարած աշխատանքները, ուսանողական ու երիտասարդական համախմբումները, հայագիտական ու հայերէնագիտական այլեւայլ ծրագրերը:

- Յառաջիկայ հնգամեակը Համազգայինի շարքերը երիտասարդացնելու, մեր պարախումբերու, երգչախումբերու, թատերախումբերու թէ՛ գեղարուեստի դպրոցներու մէջ թրծուած երբեմնի մանուկներն ու պատանիները, այսօր իբրեւ առոյգ երիտասարդներ, Համազգայինի միութեանական կազմակերպական կառույցին մէջ ներգրաւելու ու անոնց կենդանի ու արդիւնաւէտ Գործ վստահելու հնգամեակն է:

- Յար եւ նման Համազգայինի հայերէնի ու հայագիտական նիւթերու ուսուցիչներ պատրաստելու ինքզինք ապացուցած օգտաշատ ծրագրին, յառաջիկայ հնգամեակը Համազգայինի աշխարհատարած ստեղծագործական խումբերու յարատեւումն ու որակաւորումը ապահովող երիտասարդ գեղարուեստական ղեկավարներ՝ բեմադրիչներ, պարուսոյցներ, խմբավարներ ու կերպարուեստի ուսուցիչներ պատրաստելու հնգամեակն է:

- Յառաջիկայ հնգամեակը նաեւ աշխարհատարած Համազգայնական կառույցներու միջեւ ստեղծագործական համագործակցութեան ու փոխօգնութեան, այլ խօսքով, հայրենիք-սփիւռք մշակութային կապերու ամրապնդումին հետ, համասփիւռքեան մշակութային կապերու զարգացումին ու ամրապնդումին հնգամեակն է:

Փաստօրէն, մեր հիմնադիրները իրենց առաքելութեան մէջ յաջողեցան շուրջ հարիւրամեակի մը համար: Ասոր առհասարակ, գրեթէ ամէն օր, երկրագունդի այս կամ այն կէտէն, Համազգայինի 19 շրջաններու պարախումբերու, թատերախումբերու եւ երգչախումբերու ելոյթներու, հրատարակուած գիրքերու թէ՛ կերպարուեստի ցուցահանդէսներու, ինչպէս նաեւ Համազգայինի տարբեր երկիրներու ճեմարաններու աշակերտներու ու շրջանաւարտներու յաջողութիւններուն մասին՝ մամուլն ու համացանցը ողողող նիւթերն են:

Հե՞շտ էր անոնց անցած ճանապարհը. անվարան՝ ոչ: Պատկերացուցէ՛ք Ծանթերն ու Աղբալեանները, որոնք իրենց գաղափարակից ընկերներուն հետ, Հայոց Յեղասպանութենէն քանի մը տարի ետք իսկ Հայաստանի անկախութիւն կերտած են, պետական պատասխանատու պաշտօններ վարած են, այդ օրերուն վտարանդի ու տարագիր են, սակայն, իրենց հաւատքն ու նուիրումը այնքան զօրեղ ու աննկուն եղած է, որ անոնք չեն երկնչած ու ազդուած տիրող անկարագրելի դժուարութիւններէն ու յառաջ մղուած՝ դէպի Սրբազան Առաքելութիւն:

Յաճախ կրկնուած ճշմարտութիւն է, որ ամեակները իբրեւ տարիներու ամբողջութիւն, իրենց մէջ ոչինչ ունին նոր: Անհատներն ու հաւաքականութիւններն են, որոնք նման առիթներով պիտի վերարժեւորեն անցեալը, քննեն ներկայի մարտահրաւէրները, անհրաժեշտութիւններն ու հնարաւորութիւնները եւ ուրուագծեն ապագան:

Յոբելեանական հանդիսութիւնները կատարելը, բնականաբար, գովեստի ու գնահատանքի խօսքեր ըսել ու լսել պ կ'ենթադրէ: Եւ ինչքան ալ զուսպ ու ժուժկալ

ըլլանք Համազգայինի 95-ամեակի տօնակատարութեանց առիթով մեր մտորումներուն մէջ, այսօր, մտովի վերաբաղ ընելով անցած 95 տարիներու կատարածն ու ձեռքբերածը, կրնանք անվարան հաստատել, որ սփիւռքահայ հայրենակարօտ զանգուածներուն համար՝

- Համազգայինը կեանք է ու կենսակերպ: Համազգայինը հայահալաքի կազմակերպութիւն է, այլ խօսքով՝ կազմակերպուած հաւաքականութիւն, որուն շուրջ կը հաւաքուին բոլոր անոնք, որոնք որոշած են հայօրէն ապրիլ այս կեանքը: Հայօրէն ապրիլ կը նշանակէ համախմբուել հայ մշակութային արժէքներուն շուրջ, սերտել եւ իւրացնել զանոնք ու անոնց մտերմութեան մէջ շարունակել ո՛չ միայն ապրիլ, այլեւ՝ ապրեցնել:

- Համազգայինը առաքելութիւն է: Անոր առաքեալներն են բոլոր անոնք, որոնք կը դաւանին հայոց ազգային մշակոյթի արժէքներն ու ջանք ու քրտինք չեն խնայեր, կազմակերպական զանազան կառույցներու մէջ բեղուն ու կամաւոր գործունէութիւն ծաւալելու:

- Համազգայինը նուիրաբերուած է: Անոր նուիրաբերողներ գիտակից ու ձեռնհաս հայորդիներն են, որոնք խորապէս կը գիտակցին Համազգայինի հայապահպան ու մշակութատարած առաքելութեան ու անվերապահօրէն կը վստահին անոր:

- Համազգայինը յանձնառուութիւն է: Անոր յանձնառուներն են բոլոր անոնք, որոնք կը ծառանան քիչ առաջ նշուած բոլոր դժուարութիւններուն դէմ ու հիմնադիր սերունդէն իսկ կտակուած տոկուն կամքով ու հաւատքով կը շարունակեն Համազգայնականի իրենց կեանքն ու աշխատանքը:

- Համազգայինը ազգային ինքնութեան գիտակցում ու անոր ամբողջական կառուցումն է: Կեանքի ապագայնացնող այս յորձանուտին մէջ, ազգային ինքնութեան հաւաքական գիտակցութեան պակասն էր առաւելաբար, որ պարտութեան մատնեց մեզ:

- Եւ վերջապէս, Համազգայինը երիտասարդութիւն է: Համազգայինի տարբեր երկիրներու՝ տարբեր ճեմարաններու, գեղարուեստի դպրոցներու եւ ստեղծագործական խումբերու մէջ հաւաքուած մեր աննման պատանիներն ու երիտասարդները հիմք կը կազմեն տարեց, բայց ոչ ծեր այս հոյակապ միութեան, առանց որուն սփիւռքի մեր հաւաքական կեանքը վաղուց գունաթափուած ու հաւանօրէն նոյնիսկ ընդհատուած պիտի ըլլար:

95-ամեակը՝ 95-ամեակ, մշակոյթը՝ մշակոյթ, կրթութիւնը՝ կրթութիւն: Սակայն այսօր մեր սեւեռակէտը կը շարունակէ մնալ արցախահայութեան դժին ճակատագիրը: Մեր քոյր միութիւններուն հետ, այսօր լծուած ենք Հայաստանի՝ իր հայրենիքին մէջ իսկ տարագիր, ցիրուցան ու իրաւազուրկ մեր արիւնակիցներուն, այս ուս դժուարին հանգուտանին թեւ-թիկունք կանգնելու անյետաձգելի գործին: Համազգայինի Արցախի ու Հայաստանի զոյգ գրասենեակները օրն ի բուն կ'աշխատին բարոյահոգեբանական աջակցութիւն ցոյց տալ արցախի մանուկներուն, դպրոցական դասերու ուսուցման կեդրոններու մէջ օգնել անոնց կրթութեան ու դաստիարակութեան, մշակութային զանազան կերպերով, տիկնիկային ներկայացումներով թէ՛ կերպարուեստի ուսուցման ճամբով, արցունքի կաթիլ չորցնել ու ժպիտ ուրուագծել անոնց դէմքին, նպաստելով անոնց անխուսափելի հոգեխոցը մեղմելուն:

